

Պ-815-22.12.2020-SՀ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
Օ Ր Ե Ն Ք Ը

«ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՍԱԿԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ
ՓՈՓՈՒՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Հրապարակային սակարկությունների մասին» 2003 թվականի հոկտեմբերի 8-ի ՀՕ-15-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 1-ին հոդվածի 1-ին մասի 1-ին նախադասությունից հետո ավելացնել հետևյալ նախադասությունը.

«Սույն օրենքը տարածվում է էլեկտրոնային համակարգերի միջոցով կազմակերպվող սակարկությունների եւ հարկադիր աճուրդների վրա, բացառությամբ Կենտրոնական բանկի կողմից իրականացվող գործառնությունների:»:

Հոդված 2. Օրենքի 1-ին հոդվածի 6-րդ մասը ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 3. Օրենքի 2-րդ հոդվածի վերջին պարբերությունը ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 4. Օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասում «(հիպոտեկի առարկա)» և «անշարժ» բառերը հանել, իսկ նախադասության վերջին՝ «ինտերնետային կայքում» բառերից առաջ լրացնել «ֆինանսական կազմակերպությունների» բառերը:

«2. Աճուրդի մասին հրապարակային ծանուցումը հրապարակվում է զանգվածային լրատվության միջոցով և <http://www.azdarar.am> հասցեում գտնվող Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում, բացառությամբ ֆինանսական կազմակերպությունների տրամադրած վարկերի ապահովման միջոց հանդիսացող և իրացման ենթակա գույքի աճուրդի մասին հրապարակային ծանուցումների, որոնք էլեկտրոնային միջոցներով հրապարակված են համարվում, եթե տեղադրված են վարկերի ապահովման միջոց հանդիսացող և իրացման ենթակա գույքերի վերաբերյալ ֆինանսական կազմակերպությունների ինտերնետային կայքում»:

Հոդված 5. Օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2. Կազմակերպիչի և առաջարկողի միջև կնքված պայմանագրով վարձատրության չափը չի կարող գերազանցել աճուրդով վաճառքի ենթակա գույքի աճուրդում հաղթող ճանաչված մասնակցի առաջարկած առավելագույն գնի երեք տոկոսը»:

Հոդված 6. Օրենքի 19-րդ հոդվածի 3-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3. Սույն հոդվածի դրույթները չեն տարածվում հարկադիր և էլեկտրոնային աճուրդների անցկացման վրա»:

Հոդված 7. Օրենքի 21-րդ հոդվածի 3-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3. Մրցույթի մասնակցության հայտերի ընդունումը պետք է դադարի մրցույթի հայտերի բացումից առնվազն երեսուն րոպե առաջ (բացառությամբ հողամասերի վաճառքի, որը կարգավորվում է Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 78-րդ հոդվածի 5-րդ մասով), եթե մրցույթի մասին հրապարակային ծանուցման մեջ այլ ժամկետ սահմանված չէ»:

Հոդված 8. Օրենքի 35.4-րդ հոդվածից հետո լրացնել «ԳԼՈՒՄ 4.1» բառը և թիվը:

Հոդված 9. Օրենքի 4-րդ գլուխը վերնագրել՝ «ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՂ ԱՃՈՒՐԴՆԵՐ» նախադասությամբ:

« Գլուխ 4.1 ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՂ ԱՃՈՒՐԴՆԵՐ

Հոդված 35.5. *էլեկտրոնային համակարգերի միջոցով կազմակերպվող սակարկությունների հասկացությունը*

1. Էլեկտրոնային համակարգերի միջոցով կազմակերպվող սակարկություններ են համարվում այն սակարկությունները, որոնք կազմակերպվում են էլեկտրոնային եղանակով եւ

համապատասխանում են սույն օրենքով էլեկտրոնային սակարկություններին ներկայացվող նվազագույն պահանջներին՝ բացառությամբ հարկադիր էլեկտրոնային աճուրդների:

2. Էլեկտրոնային համակարգերի միջոցով կազմակերպվող սակարկությունների աճուրդի լոտ կարող է դառնալ ցանկացած շարժական կամ անշարժ գույք, այդ թվում՝ գույքային իրավունքներ, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

Հոդված 35.6. Էլեկտրոնային համակարգերի հասկացությունը

Սույն օրենքի իմաստով էլեկտրոնային համակարգեր են համարվում սակարկությունների կազմակերպման համար անհրաժեշտ ծրագրային ապահովումները, ինտերնետային հասցեն, տեխնիկական լուծումները եւ բոլոր այն համակարգերն ու միջոցները, որոնք անհրաժեշտ են էլեկտրոնային սակարկությունների կազմակերպման եւ իրականացման ու ավտոմատ եղանակով հաղթողին որոշելու համար:

Հոդված 35.7. Էլեկտրոնային համակարգերի միջոցով կազմակերպվող սակարկությունների կազմակերպիչը

«Էլեկտրոնային համակարգերի միջոցով կազմակերպվող սակարկությունների կազմակերպիչի վրա տարածվում են սույն օրենքի 2-րդ հոդվածի 5-րդ պարբերության պահանջները»:

Հոդված 35.8. Էլեկտրոնային համակարգերի միջոցով կազմակերպվող սակարկությունների վերաբերյալ հրապարակային ծանուցումը

1. Էլեկտրոնային համակարգերի միջոցով կազմակերպվող սակարկությունների վերաբերյալ աճուրդի մասին հրապարակային ծանուցումը պետք է կատարվի աճուրդն անցկացնելու օրվանից առնվազն երկու օր առաջ: Աճուրդի մասին հրապարակային ծանուցումը պետք է պարունակի սույն օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 1-2-րդ եւ 4-10-րդ կետերով սահմանված տեղեկությունները, ինչպես նաև այլ տեղեկություններ կազմակերպիչի ինտերնետային կայքին ծանոթանալու հնարավորության և այդ ինտերնետային կայքում գույքի շահագործման պատմության ու վիճակի վերաբերող լուսանկարների, տեսաձայնագրությունների ձևով պարտադիր ներառելու մասին, եթե վաճառքի ենթակա գույքն անհնար է տեղափոխել պահառության վայր:

2. Աճուրդի մասին հրապարակային ծանուցումը հրապարակվում է զանգվածային լրատվության միջոցով եւ <http://www.azdarar.am> հասցեում գտնվող Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում, բացառությամբ ֆինանսական կազմակերպությունների տրամադրած վարկերի ապահովման միջոց հանդիսացող և իրացման ենթակա գրավի առարկաների աճուրդի մասին հրապարակային ծանուցումների, որոնք էլեկտրոնային միջոցներով հրապարակված են համարվում, եթե տեղադրված են վարկերի ապահովման միջոց հանդիսացող և իրացման ենթակա գույքերի վերաբերյալ ֆինանսական կազմակերպությունների ինտերնետային կայքում:

Հոդված 35.9. Էլեկտրոնային համակարգերի միջոցով կազմակերպվող սակարկություններին ներկայացվող նվազագույն պահանջները

«1. Էլեկտրոնային համակարգերի միջոցով կազմակերպվող սակարկությունների կազմակերպիչը պետք է ունենա կայք եւ Հայաստանի Հանրապետության տարածքում գործող առևտրային բանկում բացված հաշիվ»:

2. Աճուրդին մասնակցել ցանկացող անձանց գրանցումը կատարվում է անվճար:

3. Սույն հոդվածի առաջին մասում նշված ինտերնետային կայքում պետք է հրապարակված լինի աճուրդի մասնակցության կանոնակարգն ու պայմանները:

4. Աճուրդին մասնակցել ցանկացող անձը մինչեւ աճուրդի նախորդ օրը ժամը 16:00-ն գրանցվում է ինտերնետային կայքում՝ նշելով եւ կցելով անձը հաստատող փաստաթուղթ եւ հանրային ծառայությունների համարանիշը (իրավաբանական անձանց դեպքում գրանցման վկայական եւ հարկ վճարողի հաշվառման համար) եթե այլ բան նախատեսված չէ աճուրդի կանոնակարգով, որից հետո ծրագիրը նրան տալիս է նույնականացնող համարանիշ, ինչից հետո մասնակիցը հնարավորություն է ստանում մասնակցելու աճուրդին:

5. Վաճառքի ենթակա լոտերի վերաբերյալ գնային հայտ եւ վճարումների կատարման եւ իրականացման գործընթացը սահմանվում են աճուրդի կանոնակարգով:

6. Աճուրդի կազմակերպիչը երաշխավորում է աճուրդի մասնակիցների անձնական տվյալների պաշտպանությունը, դրանք չեն կարող տրվել երրորդ անձանց, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի:

Հոդված 35.10. Աճուրդի ընթացքը եւ ավարտը

1. Աճուրդի մեկնարկը եւ ընթացքը սահմանվում են աճուրդի կանոնակարգով:

2. Աճուրդի տեւողութունը եւ ավարտը սահմանվում է աճուրդի կանոնակարգով:
3. Աճուրդը համարվում է ավարտված, երբ լրանում է աճուրդի տեւողությամբ սահմանված ժամկետը:
4. Աճուրդում հաղթող է ճանաչվում առավելագույն գին ներկայացրած մասնակիցը:
- «5. Լոտի գնի վճարումը իրականացվում է անկանխիկ եղանակով, եթե աճուրդի կազմակերպման համակարգը թույլ է տալիս կցել բանկային քարտ կամ հաշիվ »:
- «6. Կազմակերպիչն աճուրդում հաղթած մասնակցի հետ աճուրդի անցկացման օրը ստորագրում է աճուրդի արձանագրություն, որի ձևը և ստորագրության կարգը սահմանվում է աճուրդի կանոնակարգով »:
- «7. Աճուրդում հաղթող մասնակիցն արձանագրությունը ստորագրելուց հետո պարտավոր է երեք աշխատանքային օրվա ընթացքում փոխանցել գնված լոտի գինն ամբողջությամբ, հաշվանցելով նախավճարը»:
- «8. Լոտի վաճառքի ամբողջական գինը աճուրդի կազմակերպչի կողմից ստանալուց հետո եռօրյա ժամկետում աճուրդում հաղթած մասնակցի հետ կնքվում է առուվաճառքի պայմանագիր»:
- «9. Աճուրդի կազմակերպիչն աճուրդում հաղթած մասնակցի հետ գույքի առուվաճառքի պայմանագիրը կնքելուց հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում երկկողմանի ստորագրված հանձնման-ընդունման ակտի հիման վրա իրականացնում է գույքի հանձնում, տեղեկացնելով սահմանված ժամկետում իրավունքների գրանցման մասին, եթե դրանք պահանջվում են:
- Հոդված 35.11. Աճուրդը չկայացած եւ անվավեր ճանաչելը*
1. Աճուրդը համարվում է չկայացած, եթե`
- 1) աճուրդին չի մասնակցել ոչ մի գնորդ.
2. Աճուրդը պետք է չկայացած հայտարարվի ոչ ուշ, քան նշված հանգամանքների վրա հասնելու հաջորդ օրը:
- «3. Աճուրդն անվավեր կարող է ճանաչվել միայն շահագրգիռ անձի հայցով՝ դատական կարգով»:
4. Աճուրդն անվավեր ճանաչվելու դեպքում կազմակերպվում է նոր աճուրդ, իսկ դրա անհնարինության դեպքում կիրառվում են անվավերության հետեւանքներ՝ օրենքով սահմանված կարգով»:
- Հոդված 10.* Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրը:

Երկրորդ ընթեցում
Լրամշակված
[Պ-815-22.12.2020-SՀ-011/1](#)

ՏԵՂԵԿԱՆՔ

**«ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՍԱԿԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ
 ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈՒՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ
 ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

- Հոդված 1.* «Հրապարակային սակարկությունների մասին» 2003 թվականի հոկտեմբերի 8-ի ՀՕ-15-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 1-ին հոդվածի 1-ին մասի 1-ին նախադասությունից հետո ավելացնել հետևյալ նախադասությունը.
1. Սույն օրենքը կարգավորում է հրապարակային աճուրդների միջոցով գույքի, գույքային իրավունքների, մտավոր գործունեության արդյունքների և դրանց նկատմամբ իրավունքների իրացման, ինչպես նաև հրապարակային մրցույթների կազմակերպման հետ կապված հարաբերությունները, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի: [Սույն օրենքը տարածվում է էլեկտրոնային](#)

համակարգերի միջոցով կազմակերպվող սակարկությունների եւ հարկադիր աճուրդների վրա, բացառությամբ Կենտրոնական բանկի կողմից իրականացվող գործառնությունների»:

Հոդված 2. Օրենքի 1-ին հոդվածի 6-րդ մասը ուժը կորցրած ճանաչել:

~~6. Սույն օրենքը չի տարածվում էլեկտրոնային համակարգերի միջոցով կազմակերպվող սակարկությունների վրա, բացառությամբ հարկադիր աճուրդների:~~

Հոդված 3. Օրենքի 2-րդ հոդվածի վերջին պարբերությունը ուժը կորցրած ճանաչել:

~~վարկերի ապահովման միջոց (հիպոտեկի առարկա) հանդիսացող և իրացման ենթակա անշարժ գույքերի վերաբերյալ ինտերնետային կայք Կենտրոնական բանկի խորհրդի որոշմամբ սահմանված վարկերի ապահովման միջոց (հիպոտեկի առարկա) հանդիսացող և իրացման ենթակա անշարժ գույքերի վերաբերյալ ամբողջական տեղեկատվություն պարունակող ինտերնետային կայք:~~

Հոդված 4. Օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասում «(հիպոտեկի առարկա)» և «անշարժ» բառերը հանել, իսկ նախադասության վերջին «ինտերնետային կայքում» բառերից առաջ լրացնել «ֆինանսական կազմակերպությունների» բառերը:

«2. Աճուրդի մասին հրապարակային ծանուցումը հրապարակվում է զանգվածային լրատվության միջոցով և <http://www.azdarar.am> հասցեում գտնվող Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում, բացառությամբ ֆինանսական կազմակերպությունների տրամադրած վարկերի ապահովման միջոց (~~հիպոտեկի առարկա~~)-հանդիսացող և իրացման ենթակա ~~անշարժ~~ գույքի աճուրդի մասին հրապարակային ծանուցումների, որոնք էլեկտրոնային միջոցներով հրապարակված են համարվում, եթե տեղադրված են վարկերի ապահովման միջոց (~~հիպոտեկի առարկա~~)-հանդիսացող և իրացման ենթակա ~~անշարժ~~ գույքերի վերաբերյալ [ֆինանսական կազմակերպությունների](#) ինտերնետային կայքում»:

Հոդված 2 5. Օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

~~«2. Լուծարվող իրավաբանական անձի գույքի վաճառքի դեպքում վարձատրության չափը առաջարկողի եւ աճուրդի կազմակերպչի միջեւ կնքված պայմանագրով չի կարող գերազանցել վաճառվող գույքի մեկնարկային գնի տասը տոկոսը: Էլեկտրոնային համակարգերի միջոցով կազմակերպվող սակարկությունների եւ հարկադիր աճուրդների պարագայում վարձատրություն եւ/կամ դրա մասով նվազեցում չի նախատեսվում:»:~~

«2. Կազմակերպչի և առաջարկողի միջև կնքված պայմանագրով վարձատրության չափը չի կարող գերազանցել աճուրդով վաճառքի ենթակա գույքի աճուրդում հաղթող ճանաչված մասնակցի առաջարկած առավելագույն գնի երեք տոկոսը»:

Հոդված 6. Օրենքի 19-րդ հոդվածի 3-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

~~3. Սույն հոդվածի դրույթները չեն տարածվում հարկադիր աճուրդների անցկացման վրա:~~

3. Սույն հոդվածի դրույթները չեն տարածվում հարկադիր և էլեկտրոնային աճուրդների անցկացման վրա:

Հոդված 7. Օրենքի 21-րդ հոդվածի 3-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

3. Մրցույթի հայտերը բացելու միաստի օրը կարող է նշանակվել մրցույթի հայտերն ընդունելու վերջին օրվանից առնվազն երեք օր հետո:

«3. Մրցույթի մասնակցության հայտերի ընդունումը պետք է դադարի մրցույթի հայտերի բացումից առնվազն երեսուն րոպե առաջ (բացառությամբ հողամասերի վաճառքի, որը կարգավորվում է Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 78-րդ հոդվածի 5-րդ մասով), եթե մրցույթի մասին հրապարակային ծանուցման մեջ այլ ժամկետ սահմանված չէ»:

~~Հոդված 3_8. Օրենքի «Գ Լ Ռ Խ 4» բառից եւ թվից հետո լրացնել «ԲԱԺԻՆ 1» բառը եւ թիվը:~~

Օրենքի 35.4-րդ հոդվածից հետո լրացնել «ԳԼՌԽ 4.1» բառը և թիվը:

~~Հոդված 4_9. Օրենքի 4-րդ գլուխը լրացնել նոր 2-րդ բաժնով. Օրենքի 4-րդ գլուխը վերնագրել՝ «ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀՄՄԱԿԱՐԳԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՎՈՂ ԱՃՈՒՐԴՆԵՐ» նախադասությամբ:~~

«ԲԱԺԻՆ 2_ Գլուխ 4.1 ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀՄՄԱԿԱՐԳԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՎՈՂ ԱՃՈՒՐԴՆԵՐ

Հոդված 35.5. Էլեկտրոնային համակարգերի միջոցով կազմակերպվող սակարկությունների հասկացությունը¹

1. Էլեկտրոնային համակարգերի միջոցով կազմակերպվող սակարկություններ են համարվում այն սակարկությունները, որոնք կազմակերպվում են էլեկտրոնային եղանակով եւ համապատասխանում են սույն օրենքով էլեկտրոնային սակարկություններին ներկայացվող նվազագույն պահանջներին՝ բացառությամբ հարկադիր էլեկտրոնային աճուրդների:

2. Էլեկտրոնային համակարգերի միջոցով կազմակերպվող սակարկությունների աճուրդի լոտ կարող է դառնալ ցանկացած շարժական կամ անշարժ գույք, այդ թվում՝ գույքային իրավունքներ, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

Հոդված 35.6. Էլեկտրոնային համակարգերի հասկացությունը

Սույն օրենքի իմաստով էլեկտրոնային համակարգեր են համարվում սակարկությունների կազմակերպման համար անհրաժեշտ ծրագրային ապահովումները, ինտերնետային հասցեն, տեխնիկական լուծումները եւ բոլոր այն համակարգերն ու միջոցները, որոնք անհրաժեշտ են էլեկտրոնային սակարկությունների կազմակերպման եւ իրականացման ու ավտոմատ եղանակով հաղթողին որոշելու համար:

Հոդված 35.7. Էլեկտրոնային համակարգերի միջոցով կազմակերպվող սակարկությունների կազմակերպիչը

~~1. Էլեկտրոնային համակարգերի միջոցով կազմակերպվող սակարկությունների կազմակերպիչ կարող են լինել այն կազմակերպությունները, որոնք կապահպանեն~~

~~սույն օրենքով էլեկտրոնային համակարգերի միջոցով կազմակերպվող սակարկություններին ներկայացվող պահանջները:~~

~~2. Կազմակերպություններ՝ Հայաստանի Հանրապետության տարածքում ստեղծված (պետական գրանցում ստացած, հաշվառված) իրավաբանական անձ, դրա՝ Հայաստանի Հանրապետության տարածքում գործող առանձնացված ստորաբաժանումներ եւ հիմնարկներ, օտարերկրյա կազմակերպությունների Հայաստանի Հանրապետության տարածքում գործող առանձնացված ստորաբաժանումներ:~~

«էլեկտրոնային համակարգերի միջոցով կազմակերպվող սակարկությունների կազմակերպիչի վրա տարածվում են սույն օրենքի 2-րդ հոդվածի 5-րդ պարբերության պահանջները»:

Հոդված 35.8. Էլեկտրոնային համակարգերի միջոցով կազմակերպվող սակարկությունների վերաբերյալ հրապարակային ծանուցումը

1. Էլեկտրոնային համակարգերի միջոցով կազմակերպվող սակարկությունների վերաբերյալ աճուրդի մասին հրապարակային ծանուցումը պետք է կատարվի աճուրդն անցկացնելու օրվանից առնվազն ~~տաս~~ երկու օր առաջ: Աճուրդի մասին հրապարակային ծանուցումը պետք է պարունակի սույն օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 1-2-րդ եւ ~~4-9-րդ~~ 4-10-րդ կետերով սահմանված տեղեկությունները, ինչպես նաև այլ տեղեկություններ կազմակերպիչի ինտերնետային կայքին ծանոթանալու հնարավորության և այդ ինտերնետային կայքում գույքի շահագործման պատմության ու վիճակի վերաբերող լուսանկարների, տեսաձայնագրությունների ձևով պարտադիր ներառելու մասին, եթե վաճառքի ենթակա գույքն անհնար է տեղափոխել պահառության վայր:

2. Աճուրդի մասին հրապարակային ծանուցումը հրապարակվում է զանգվածային լրատվության միջոցով եւ <http://www.azdarar.am> հասցեում գտնվող Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում, բացառությամբ ֆինանսական կազմակերպությունների տրամադրած վարկերի ապահովման միջոց հանդիսացող և իրացման ենթակա գրավի առարկաների աճուրդի մասին հրապարակային ծանուցումների, որոնք էլեկտրոնային միջոցներով հրապարակված են համարվում, եթե տեղադրված են վարկերի ապահովման միջոց հանդիսացող և իրացման ենթակա գույքերի վերաբերյալ ֆինանսական կազմակերպությունների ինտերնետային կայքում:

Հոդված 35.9. Էլեկտրոնային համակարգերի միջոցով կազմակերպվող սակարկություններին ներկայացվող նվազագույն պահանջները

~~1. Էլեկտրոնային համակարգերի միջոցով կազմակերպվող սակարկությունների կազմակերպիչը պետք է ունենա ինտերնետային էջ եւ ՀՀ-ում գրանցված բանկային հաշիվ որի միջոցով աճուրդին մասնակցել ցանկացող անձինք պետք է հնարավորություն ունենան գրանցվելու եւ մասնակցելու աճուրդին:~~

«1. Էլեկտրոնային համակարգերի միջոցով կազմակերպվող սակարկությունների կազմակերպիչը պետք է ունենա կայք եւ Հայաստանի Հանրապետության տարածքում գործող առևտրային բանկում բացված հաշիվ»:

~~2. Աճուրդին մասնակցել ցանկացող անձանց գրանցումը կատարվում է անվճար:~~

3. Սույն հոդվածի առաջին մասում նշված ինտերնետային ~~էջում~~ կայքում պետք է հրապարակված լինի աճուրդի մասնակցության կանոնակարգն ու պայմանները:

4. Աճուրդին մասնակցել ցանկացող անձը մինչեւ աճուրդի նախորդ օրը ժամը 16:00-ն գրանցվում է [հնտերնետային](#) կայքում՝ նշելով եւ կցելով անձը հաստատող փաստաթուղթ եւ հանրային ծառայությունների համարանիշը (իրավաբանական անձանց դեպքում գրանցման վկայական եւ ~~«ՎՎՀՀ հարկ վճարողի հաշվառման համար, բանկային հաշիվը»~~) եթե այլ բան նախատեսված չէ աճուրդի ~~կանոններով~~ [կանոնակարգով](#), որից հետո ծրագիրը նրան տալիս է նույնականացնող համարանիշ, ինչից հետո մասնակիցը հնարավորություն է ստանում մասնակցելու աճուրդին:²

5. Կաճառքի ենթակա լուտերի վերաբերյալ ~~գնային առաջարկները~~ [գնային հայտ](#) եւ վճարումների կատարման եւ իրականացման գործընթացքը սահմանվում են աճուրդի կանոնակարգով:

6. Աճուրդի կազմակերպիչը երաշխավորում է աճուրդի մասնակիցների անձնական տվյալների պաշտպանությունը, դրանք չեն կարող տրվել երրորդ անձանց, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի:

Հոդված 35.10. Աճուրդի ընթացքը եւ ավարտը

1. Աճուրդի մեկնարկը եւ ընթացքը սահմանվում են աճուրդի ~~կանոններով~~ [կանոնակարգով](#):

2. Աճուրդի տեւողությունը եւ ավարտը սահմանվում է աճուրդի կանոնակարգով:

3. Աճուրդը համարվում է ավարտված, երբ լրանում է աճուրդի տեւողությամբ սահմանված ժամկետը:

4. Աճուրդում հաղթող է ճանաչվում առավելագույն գին ներկայացրած մասնակիցը:

~~5. Աճուրդում հաղթած մասնակիցը պարտավոր է երեք աշխատանքային օրվա ընթացքում փոխանցել գնված լուտի գինն ամբողջությամբ, իսկ նախավճար վճարված լինելու դեպքում՝ հաշվանցելով նախավճարը:~~

[«5.7. Աճուրդում հաղթող մասնակիցն արձանագրությունը ստորագրելուց հետո պարտավոր է երեք աշխատանքային օրվա ընթացքում փոխանցել գնված լուտի գինն ամբողջությամբ, հաշվանցելով նախավճարը»:](#)

~~6. Լուտի գնի վճարումը իրականացվում է անկանխիկ եղանակով, որը կարող է իրականացվել նաեւ բանկային հաշվի եւ/կամ քարտի միջոցով եթե աճուրդի կազմակերպման համակարգը թույլ է տալիս կցել բանկային քարտ կամ հաշիվ:~~

[«6. 5. Լուտի գնի վճարումը իրականացվում է անկանխիկ եղանակով, եթե աճուրդի կազմակերպման համակարգը թույլ է տալիս կցել բանկային քարտ կամ հաշիվ »:](#)

~~7. Աճուրդում հաղթած մասնակցի հետ ստորագրվում է արձանագրություն, որի ձեւը եւ ստորագրության կարգը սահմանվում է աճուրդի կանոնակարգով:~~

[«7. 6. Կազմակերպիչն աճուրդում հաղթած մասնակցի հետ աճուրդի անցկացման օրը ստորագրում է աճուրդի արձանագրություն, որի ձևը և ստորագրության կարգը սահմանվում է աճուրդի կանոնակարգով »:](#)

~~8. Լուտի վաճառքի ամբողջական գինը աճուրդի կազմակերպչի կողմից ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում աճուրդում հաղթած մասնակցի հետ կնքվում է առուվաճառքի պայմանագիր եւ գույքի հանձնման ընդունման ակտ:~~

«8. Լուտի վաճառքի ամբողջական գինը աճուրդի կազմակերպչի կողմից ստանալուց հետո եռօրյա—ժամկետում աճուրդում հաղթած մասնակցի հետ կնքվում է առուվաճառքի պայմանագիր»:

~~9. Աճուրդի կազմակերպիչը լուտի գնման գինն ամբողջությամբ ստանալուց հետո այն երեք աշխատանքային օրվա ընթացքում փոխանցում է լուտը վաճառքի ներկայացրած անձին/ընկերությանը:~~

«9. Աճուրդի կազմակերպիչն աճուրդում հաղթած մասնակցի հետ գույքի առուվաճառքի պայմանագիրը կնքելուց հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում երկկողմանի ստորագրված հանձնման-ընդունման ակտի հիման վրա հրականագնում է գույքի հանձնում, տեղեկացնելով սահմանված ժամկետում հրավուրնների գրանցման մասին, եթե դրանք պահանջվում են:

Հոդված 35.11. Աճուրդը չկայացած եւ անվավեր ճանաչելը

1. Աճուրդը համարվում է չկայացած, եթե՝

1) աճուրդին չի մասնակցել ոչ մի գնորդ.

~~2) աճուրդի ընթացքում լուտի մեկնարկային գնի հավելում չի կատարվել:~~

~~3) աճուրդում հաղթած անձը հրաժարվել է ստորագրել աճուրդի արդյունքների մասին արձանագրությունը կամ սահմանված ժամկետում չի վճարել լուտի գնման գինը:~~

2. Աճուրդը պետք է չկայացած հայտարարվի ոչ ուշ, քան նշված հանգամանքների վրա հասնելու հաջորդ օրը:

~~3. Աճուրդը համարվում է անվավեր եթե չեն պահպանվել սույն օրենքի 35.5-35.10-րդ հոդվածներով սահմանված պահանջները եւ/կամ կազմակերպչի կողմից սահմանված աճուրդի կանոնները:~~

«3. Աճուրդն անվավեր կարող է ճանաչվել միայն շահագրգիռ անձի հայցով դատական կարգով:

4. Աճուրդն անվավեր ճանաչվելու դեպքում կազմակերպվում է նոր աճուրդ, իսկ դրա անհնարինության դեպքում կիրառվում են անվավերության հետեւանքներ՝ օրենքով սահմանված կարգով:»:

Հոդված 5.-10. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող

տասներորդ

օրը:

Ա Մ Փ Ո Փ Ա Թ Ե Ր Թ

«ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՍԱԿԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (ՓԱՍՏԱԹՂԹԱՅԻՆ ԿՈՂՊ-815-22.12.2020-SՀ-011/1) ԿԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

N	Առաջարկի հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկը	Առաջարկի բովանդակությունը	Առաջարկի վերաբերյալ հեղինակի (հիմնական գեկուցողի) եզրակացությունը	Առաջարկը ընդունելու կամ մերժելու վերաբերյալ Հանձնաժողովի որոշումը
1	2	3	4	5	6
1.	ՀՀ Կառավարություն	Նախագծի 1-ին հոդված	Նախագծի 1-ին հոդվածի 1-ին մասի 1-ին նախադասությունից հետո ավելացնել հետևյալ նախադասությունը. «1.Սույն օրենքը տարածվում է էլեկտրոնային համակարգերի միջոցով կազմակերպվող սակարկությունների եւ հարկադիր աճուրդների վրա, բացառությամբ Կենտրոնական բանկի կողմից իրականացվող գործառնությունների:»:	Ընդունվել է	Ընդունվել է
2.	ՀՀ Կառավարություն	Նախագծի 2-րդ հոդված	Օրենքի 1-ին հոդվածի 6-րդ մասը ուժը կորցրած ճանաչել:	Ընդունվել է	Ընդունվել է
3.	ՀՀ Կառավարություն	Նախագծի 7-րդ հոդված	Օրենքի 21-րդ հոդվածի 3-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «3. Մրցույթի մասնակցության հայտերի ընդունումը պետք է դադարի մրցույթի հայտերի բացումից առնվազն երեսուն	Ընդունվել է	Ընդունվել է

			րոպե առաջ (բացառությամբ հողամասերի վաճառքի, որը կարգավորվում է Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 78-րդ հոդվածի 5-րդ մասով), եթե մրցույթի մասին հրապարակային ծանուցման մեջ այլ ժամկետ սահմանված չէ»:		
4.	ՀՀ Կառավարություն	Նախագծի 9-րդ հոդված	Նախագծի 35.7-րդ հոդվածը շարադրել հետևյալ բովանդակությամբ. «Էլեկտրոնային համակարգերի միջոցով կազմակերպվող սակարկությունների կազմակերպիչի վրա տարածվում են սույն օրենքի 2-րդ հոդվածի 5-րդ պարբերության պահանջները»:	Ընդունվել է	Ընդունվել է
5.	ՀՀ Կառավարություն	Նախագծի 9-րդ հոդված	Նախագծի 35.8-րդ հոդվածի 1-ին մասում «սահմանված տեղեկությունները» բառերից հետո լրացնել «,ինչպես նաև այլ տեղեկություններ կազմակերպչի ինտերնետային կայքին ծանոթանալու հնարավորության և այդ կայքում գույքի շահագործման պատմության ու վիճակի վերաբերող լուսանկարների, տեսաձայնագրությունների ձևով պարտադիր ներառելու մասին, եթե վաճառքի ենթակա գույքն անհնար է տեղափոխել պահառության վայր» բառերը»:	Ընդունվել է	Ընդունվել է
6.	ՀՀ Կառավարություն	Նախագծի 9-րդ հոդված	Նախագծի 35.8-րդ հոդվածի 1-ին մասում «4-9-րդ» բառերը և թվերը փոխարինել «4-10-րդ» բառերով և թվերով:	Ընդունվել է	Ընդունվել է
7.	ՀՀ Կառավարություն	Նախագծի 9-րդ հոդված	Նախագծի 35.9-րդ հոդվածի 1-ին մասում «ՀՀ-ում գրանցված» բառերը փոխարինել «Հայաստանի Հանրապետության տարածքում գործող առևտրային	Ընդունվել է	Ընդունվել է

			բանկում բացված» բառերով:		
8.	ՀՀ Կառավարություն	Նախագծի 9-րդ հոդված	Նախագծի 35.9-րդ հոդվածի 4-րդ մասի «բանկային հաշիվը» բառերը հանել:	Ընդունվել է	Ընդունվել է
9.	ՀՀ Կառավարություն	Նախագծի 9-րդ հոդված	Նախագծի 35.10-րդ հոդվածի 5-րդ, 6-րդ և 7-րդ մասերի հաջորդականությունը փոխել հետևյալ առաջնահերթությամբ՝ 7-րդ, 5-րդ և 6-րդ:	Ընդունվել է	Ընդունվել է
10.	ՀՀ Կառավարություն	Նախագծի 9-րդ հոդված	Նախագծի 35.10-րդ հոդվածի 5-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «5. Աճուրդում հաղթող մասնակիցն արձանագրությունը ստորագրելուց հետո պարտավոր է երեք աշխատանաթային օրվա ընթացքում փոխանցել գնված լոտի գինն ամբողջությամբ, հաշվանցելով նախավճարը»:	Ընդունվել է	Ընդունվել է
11.	ՀՀ Կառավարություն	Նախագծի 9-րդ հոդված	Նախագծի 35.10-րդ հոդվածի 6-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «6. Լոտի գնի վճարումը իրականացվում է անկանխիկ եղանակով, եթե աճուրդի կազմակերպման համակարգը թույլ է տալիս կցել բանկային քարտ կամ հաշիվ »:	Ընդունվել է	Ընդունվել է
12.	ՀՀ Կառավարություն	Նախագծի 9-րդ հոդված	Նախագծի 35.10-րդ հոդվածի 7-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «7. Կազմակերպիչն աճուրդում հաղթած մասնակցի հետ աճուրդի անցկացման օրը ստորագրում է աճուրդի արձանագրություն, որի ձևը և ստորագրության կարգը սահմանվում է աճուրդի կանոնակարգով »:	Ընդունվել է	Ընդունվել է
13.	ՀՀ Կառավարություն	Նախագծի 9-րդ	Նախագծի 35.10-րդ հոդվածի 8-րդ մասը շարադրել	Ընդունվել է	Ընդունվել է

		հողված	հետևյալ խմբագրությամբ. «8. Լոտի վաճառքի ամբողջական գինը աճուրդի կազմակերպչի կողմից ստանալուց հետո եռօրյա ժամկետում աճուրդում հաղթած մասնակցի հետ կնքվում է առուվաճառքի պայմանագիր»:		
14.	ՀՀ Կառավարություն	Նախագծի 9-րդ հոդված	Նախագծի 35.10-րդ հոդվածի 9-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «9. Աճուրդի կազմակերպիչն աճուրդում հաղթած մասնակցի հետ գույքի առուվաճառքի պայմանագիրը կնքելուց հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում երկկողմանի ստորագրված հանձնման-ընդունման ակտի հիման վրա իրականացնում է գույքի հանձնում, տեղեկացնելով սահմանված ժամկետում իրավունքների գրանցման մասին, եթե դրանք պահանջվում են»:	Ընդունվել է	Ընդունվել է
15.	ՀՀ Կառավարություն	Նախագծի 9-րդ հոդված	Նախագծի 35.11-րդ հոդվածի 3-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «3. Աճուրդն անվավեր կարող է ճանաչվել միայն շահագրգիռ անձի հայցով՝ դատական կարգով»:	Ընդունվել է	Ընդունվել է
16.	ՀՀ Կառավարություն	Նախագծի 9-րդ հոդված	Նախագծի 35.11-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը հանել:	Ընդունվել է	Ընդունվել է
17.	ՀՀ Կառավարություն	Նախագիծ	Նախագծում «աճուրդի կանոններ» բառերը փոխարինել «աճուրդի կանոնակարգ» բառերով:	Ընդունվել է	Ընդունվել է
18.	Աժ պատգամավոր Արտակ Մանուկյան	Նախագծի վերնագիր	Նախագծի վերնագրում «Հրապարակային սակարկությունների մասին» օրենքի (այսուհետ նաև Օրենք) կրճատ անվանման հիշատակման մեջ նշված «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ» բառերը հանել:	Ընդունվել է	Ընդունվել է

19.	Աժ պատգամավոր Արտակ Մանուկյան	Նախագիծ	Նախագծում ավելացնել նոր հոդված 2, հոդված 3, հոդված 4, հոդված 6 և հոդված 7 համապատասխանաբար փոխելով հոդված 2-ի, հոդված 3-ի, հոդված 4-ի և հոդված 5-ի համարակալումները:	Ընդունվել է	Ընդունվել է
20.	Աժ պատգամավոր Արտակ Մանուկյան	Նախագծի 3-րդ հոդված	Օրենքի 2-րդ հոդվածի վերջին պարբերությունը ուժը կորցրած ճանաչել:	Ընդունվել է	Ընդունվել է
21.	Աժ պատգամավոր Արտակ Մանուկյան	Նախագծի 4-րդ հոդված	Օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասում «(հիպոտեկի առարկա)» և «անշարժ» բառերը հանել, իսկ նախադասության վերջին՝ «ինտերնետային կայքում» բառերից առաջ լրացնել «ֆինանսական կազմակերպությունների» բառերը:	Ընդունվել է	Ընդունվել է
22.	Աժ պատգամավոր Արտակ Մանուկյան	Նախագծի 5-րդ հոդված	Օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «2. Կազմակերպիչի և առաջարկողի միջև կնքված պայմանագրով վարձատրության չափը չի կարող գերազանցել աճուրդով վաճառքի ենթակա գույքի աճուրդում հաղթող ճանաչված մասնակցի առաջարկած առավելագույն գնի երեք տոկոսը:»	Ընդունվել է	Ընդունվել է
23.	Աժ պատգամավոր Արտակ Մանուկյան	Նախագծի 6-րդ հոդված	Օրենքի 19-րդ հոդվածի 3-րդ մասը շարադրել հետևյալ բովանդակությամբ. 3. Սույն հոդվածի դրույթները չեն տարածվում հարկադիր և էլեկտրոնային աճուրդների անցկացման վրա:»:	Ընդունվել է	Ընդունվել է
24.	Աժ պատգամավոր Արտակ Մանուկյան	Նախագծի 8-րդ հոդված	Օրենքի 35.4-րդ հոդվածից հետո լրացնել «ԳԼՈՒԽ 4.1» բառը և թիվը:	Ընդունվել է	Ընդունվել է
25.	Աժ պատգամավոր Արտակ Մանուկյան	Նախագծի 9-րդ հոդված	Նախագծի 8-րդ հոդվածը շարադրել հետևյալ բովանդակությամբ. «Օրենքի 4.1 գլուխը վերնագրել «ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՎՈՂ	Ընդունվել է	Ընդունվել է

			ԱՃՈՒՐԴՆԵՐ»:		
26.	Աժ պատգամավոր Արտակ Մանուկյան	Նախագծի 9-րդ հոդված	Նախագծի 35.6-րդ հոդվածում «իրականացման» բառից հետո լրացնել «ու ավտոմատ եղանակով հաղթողին որոշելու» բառերը:	Ընդունվել է	Ընդունվել է
27.	Աժ պատգամավոր Արտակ Մանուկյան	Նախագծի 9-րդ հոդված	Նախագծի 35.8-րդ հոդվածի առաջին նախադասության «տաս» բառը փոխարինել «երկու» բառով:	Ընդունվել է	Ընդունվել է
28.	Աժ պատգամավոր Արտակ Մանուկյան	Նախագծի 9-րդ հոդված	Նախագծի 35.8-րդ հոդվածի 2-րդ մասի «կայքում» բառից հետո լրացնել «բացառությամբ ֆինանսական կազմակերպությունների տրամադրած վարկերի ապահովման միջոց հանդիսացող և իրացման ենթակա գրավի առարկաների աճուրդի մասին հրապարակային ծանուցումների, որոնք էլեկտրոնային միջոցներով հրապարակված են համարվում, եթե տեղադրված են վարկերի ապահովման միջոց հանդիսացող և իրացման ենթակա գույքերի վերաբերյալ ֆինանսական կազմակերպությունների ինտերնետային կայքում» բառերը:	Ընդունվել է	Ընդունվել է
29.	Աժ պատգամավոր Արտակ Մանուկյան	Նախագծի 9-րդ հոդված	Նախագծի 35.9-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ . «1. էլեկտրոնային համակարգերի միջոցով կազմակերպվող սակարկությունների կազմակերպիչը պետք է ունենա կայք եւ Հայաստանի Հանրապետության տարածքում գործող առևտրային բանկում բացված հաշիվ»:	Ընդունվել է	Ընդունվել է
30.	Աժ պատգամավոր Արտակ Մանուկյան	Նախագծի 9-րդ հոդված	Նախագծի 35.9-րդ հոդվածի 4-րդ մասի «ՀՎՀՀ» հապավումը փոխարինել «հարկ վճարողի հարկային համար» բառերով:	Ընդունվել է	Ընդունվել է
31.	Աժ պատգամավոր Արտակ Մանուկյան	Նախագծի 9-րդ հոդված	Նախագծի 35.9-րդ հոդվածի 5-րդ մասի «զնային առաջարկները» բառերը փոխարինել «զնային հայտ» բառերով:	Ընդունվել է	Ընդունվել է